



3. ՂԸՌ-ԱԹ

Կէղնի շէղնի մե թագավորմ կէղնի, էդ թագավորը շատ հարուստ կէղնի:

Մե օրմ էդ թագավորը միտք կէնե թե. «Ֆիլան ժովի մեջը մե հուրի փերու աղջիկ կա, էրնեկ թե ձեռքս ընկներ», էդ րսելու պես՝ աչքերը հանեն ու կը տանին: Էդ թագավորն է, էս կողմ, էն կողմ, դոխտուրներ կը կանչե, հեշ մեկմ չի կրնա իլլաճմ էնե:

Մենձ տղեն մե օրմ հորը կըսե կը թե.

— Հայրիկ, մե խուրչինմ օսկի տու ընծի, մե լավ ձիմ տուր, լավ թուրմ, թվանքմ, ես էրթամ աչքերդ գտնիմ բերեմ:

Հերը կըսե. — Օղուլ, դու ի՞նչ պըտի կրնաս իմ աչքերուս դեղը բերե:

Կըսե կը թե. — Քու ի՞նչ բանդ է, ես բերեմ կը:

— Տե օր էդպես է, ահան քեղի մե խուրչին օսկի, գնա՛, մտի գոմը, որ ձին օր կը հավնիս հեծի, գնա:

Տղեն գելնի կէրթա կը, հոր քսածի պես ձիմ կը քաշե դուս, խուրչինմ օսկի կառնի ու կէրթա: Շատ կէրթա, քիչ կէրթա, շատն ու քիչը աստված գիտե, կէրթա կը տեսնի օր մե մենձ ձորի մեջ տեղմ կա, օր հազար ոանգ ծաղիկներ է բուսնած: Ինքն իրան կըսե. «Էս ծաղիկներն օր հորս աչքերը չաղցընեն, հեշ բանմ չի սաղցընե»:

Էդ ծաղիկներից բիտառունից էլ կը պոկե, կառնի գուքա կը: Կառնի գուքա կը հոր քաղաքը, հորը կըսե.

— Հայրիկ, աշոյ լուս, աշքերուդ դեղը բերել եմ:

Բերեն կը էդ ծաղիկները, իրար կը խառնեն, կէփեն շրով. դնեն կը հոր աշքերուն, հեշ օդուտ չի տա:

Հերը հարցնե կը, թե.— Ա՛յ տղա, էս ծաղիկները դու հո՞ւրտից բերիր:

Կըսե.— Հնդու երկիրը գնացի, ֆիլան ձորի մեջը հաղար հըրոանգ ծաղիկ էր բուսնած, քաղեցի բերի:

Հերը կըսե.— Հե՛յ, օղուլ, էդ ձորը էն ձորն է, օր ես քսան տարի հառաջ Հնդու թագաւորի հետ օր ես կոխ էրի, ձիանս էդտեղ յաթաղ էին տվել, փթրել էին, էդ փթրից էդպէս ծաղիկներ է էղել. հրլարտ շեն օգնե աշքերուս:

Վախտմ, ժամանակմ կանցնի, օրթանճիլ տղեն գուքա հառաջ.

— Հայրիկ, տուր ընծի,— կըսե կը,— մե խուրչինմ օսկի, մե լավ ձիմ ես էրթամ աշքերուդ գեղը բերեմ: Էն դմբոն ի՞նչ է օր, աշքերու գեղ բերի:

Հերը կըսե.— Օղուլ, գարդակ բան է, դու էլ մենձ ախպորդ պես կէնես:

— Չէ՛,— կըսե,— հայրիկ, օր չը բերի, ինչ գուքես ընծի էրա:

Հերը կըսե.— Գնա՛, օղուլ, մե խուրչինմ օսկի առ, մե լավ ձիմ էլ վերու, գնա՛, աչենք գո՛ւ ինչ կէնես:

Տղան կառնի խուրչինմ օսկի, կէրթա գոմը ձիմ դուս կը քաշե, հեծնի կը ու գընկնի ճամփա:

էդ տղեն էր, հաշխըրքե հաշխարք, քաղքե քաղաք ման գուքա, հեշ բան չի գտնի, կէրթա շու տեղմ կը տեսնի օր, ի՛նչ, օխտը ախպուր, համենքը մե հըրոանգ շուր կը բխան:

Ինքն իրան կըսե.— Հե,— կըսե,— էս ջրերն օր հորս աշքերուն գեղ չէղնին, հեշ բանմ էլ դեղ չի էղնի:

Բովը մե ամանմ կէղնի, էդ ամանը օխտը ջրեն էլ քիչ լցնե կը, կառնի ու աթա հարաքաթ, դամշիա բարաքյաթ, սուր հա սուր՝, գուքա գելնի իրան հոր քաղաքը:

Խաբարը կէրթա հորը.— Տղեդ էկավ, աշքերուդ դեղն էլ բերեց: Հերը տղին կը կանչե, հերեսները պագե կը, կըսե.

— Աշքերու գեղը բերի՛ր:

Տղեն կըսե.— Հա՛, բերի:

— Ապրիս,— կըսե,— գնա բեր քսեմ աշքերիս:

¹ Քշիթ հա քշիթ (Մ. Բ.):

Տղեն կէրթա կը, ամանով ջուրը կաննե, գուքա, հոր աչքերուն կը քսե: Հեշ քան չի էղնի:

Հերը կըսե.— Ա՛յ տղա, էս հո՞րտից բերիր էս ջուրը:

— Գնացի,— կըսե կը,— Մարա երկիրը, մե շուիմ մեջ օխտը հախպուր ըխար կը, համեքը մե ունգ, ես էլ ըսի էսոնք օր հորս աչքերուն գեղ շէղնին, հեշ քան չի էղնի:

— Հե՛յ,— կըսե հերը,— օղուլ, էգ հախպըրները,— կըսե,— իմ հախպուրներս էին, եռսուն տարի հառաջ դեերի հետ կովանք, խլեցին ձեռքիցս, էնոնց անմեն մե ջուրը մե բնութենմ ուներ, մեկը իսանի ջուր էր, վով խմե՛ր՝ իսան կը դառնար, մեկը մառալի ջուր էր, վով խմե՛ր՝ մառալ կը դառնար, մեկը գիլու ջուր էր, վով խմե՛ր՝ գիլ կը դառնար, մեկը զովտի ջուր էր, վով խմե՛ր՝ զովտ կը կդառնար, մեկը ֆըլի ջուր էր, վով խմե՛ր՝ ֆիլ կը դառնար, մեկն էլ մեկ կոտոջանի բլարքատունի՛, վով խմե՛ր՝ բլարքատուն կը դառնար, մեկն էլ թըռչունի ջուր էր, վով խմե՛ր՝ թռչուն կը դառնար: Օղուլ էդոնք ի՞նչ աչքերուս պըտի օգնեն, գնա, տղա, գնա գործիդ:

Վախտմ, ժամանակմ էլի կանցնի: Պըտի տղեն գուքա հառաջ, կէրթա մորը կըսե կը.

— Մայրի՛կ, ես պտի էրթամ, յա՛ հորս աչքերու դեղը բերեմ, յա սաղ պըտի ետ չգամ:

Մոր էլ օր պըտի տղեն էր, մերը շատ գուզեր բիտտունից, ըսավ.— Օղո՛ւլ, թարկը տուր, դու շես կրնա էրթա բերի:

Տղեն կայնե՛ր էր ինատին, կըսե՛ր.— Զէ՛, օր պըտի էրթամ բերեմ:

Մորը իլլածը կտրավ, տեսավ օր տղին չի կրնա ետ կայնեցընե: էդ աղի անունն էլ Ալեքսան էր, ըսավ.

— Ալեքսան ջան, օր պըտի էրթաս, ես քեղի բանմ կըսեմ, հըմը հորդ չըսես: Կէրթաս հորիցդ խոսք կառնես, օր ինչ ուզես՝ տա: Եփ օր խոսք առար, ըսա թե՛ «Ղըռ-աթդ և էն թուրդ օր համմեն քցելուն եթմիշ՝ արշին հերկըննա կը, էն թուրդ գուզեմ: Օր տվեց, հիմացիր օր կըրնաս էրթա բերի: Հըմը, Ալեքսան ջան, իմ անունս լըտաս, չըսես թե. «Մերս խրատ տվեց»:

Մորիցն օր խրատը կառնի կը պրծնի, կէրթա կը հորը կուշտը, կըսե.

¹ Ռեզեղջուր (Մ. Կ.):

² Ցոթանտուն (Մ. Կ.):

— Հայրիկ, կէրթամ աչքերուդ դեղը բերելու, հըմը, ինչ ուզեմ, պրտի տաս:

Հերը կրսե.— Օղո՛ւլ, ի՞նչ պըտի ուզես, ինչ օր ուզես՝ քեզի համար հաղըր է:

Հոր մտքից հեշ չի անցնի թե տղեն Ղըռ-աթի յա թրի անուն պըտի տաւ Կրսե.— Ի՞նչ դուզես, կուտամ:

— Լավ,— կրսե,— օր խոսք տվիր, դու քու խոսքեդ ետ չես դառնաւ, Դուզեմ Ղըռ-աթդ, մեկ էլ էն լավ թուրդ:

— Է՛, օղուլ, քու խրատ տվողիդ վիզը տակը մնա, էդ վո՞ւ վ քեդի խրատ տվեց, մե՛րդ:

— Չի՛, հայրիկ, յոթվերքը վկա, մերս ընծի բան չէ ըսե:

— Հըպը դու հո՛ւրտից գիտեիր:

— Ես,— կրսե,— էրածս էի տես, օր դու էդպէս Ղըռ-աթ ու թուր ունիս: Մե հալիվորմ էկավ էրծիս մեջ ընծի ըսավ, օր. Վժու հերդ Ղըռ-աթմ ու լավ թուրմ ունի, օր էնիկ տա, կրնաս էրթաս հորդ աչքերու դեղը բերեա:

Է՛հ, ի՞նչ էնեք, հոր սրտից հարուն կէրթար, հըմը մեկ անգամ խոսք էր տվե, չէր կըրնա խոսքեն ետ դառնա:

Ըսավ.— Կուտամ, օղուլ, հըմը թեզ ետ դառնաս:

Տղեն ըսավ.— Ընչի՞, հայրիկ:

Հերն ըսավ.— Օր ուրիշ թագավորներ հիմանան թե Ղըռ-աթը քաղբից դուս է գնացե, բիտտուն կը թափին վրես, սինոռս ձեռքիցս կառնին, ինձ էլ կը սըպանեն, էլ ի՞նչ օղուտ քու բերելդ:

Թագավորը էդ խոսքը կրսե ու գելնի կէրթա Ղըռ-աթի գոմր: Տղեն նես կը մտնի օր ի՞նչ, Ղըռ-աթի գոմը իրանց տնից հիստակ է: Ղըռ-աթի մսուրքը քիշմիշ էր լցած: Դու մի ըսե, քիշմիշ կուտեր կը:

Թագավորը բերեց մե լավ թիմարմ տվեց Ղըռ-աթին իրան ձեռքով, հանկըջեն էլ ըսավ.

— Ղըռ-աթ ջան, տղես քեզի ամանաթ, կը տանիս սաղ սալամաթ ետ կը բերես: Ը՛հտե պագեց Ղըռ-աթի հերեսն ու գնաց:

Թագավորը թող մնա իրան տեղը, մենք էրթանք տղի ու Ղըռ-աթի քովը:

Տղեն Ղըռ-աթին դուս քաշեց, հեծավ, բիրտան միտքն ընկավ, օր թուրը չէ առել: Կանչեց ծառաներից մեկին, ղրկեց հոր քովը, ըսավ օր. ՎԱ՛լեքսանը հեծե ձին, պատրաստվեք է, թուրը գուզե:

Հերը ի՞նչ էնեք, հոգին կուտար թրի համար, հըմը մեկ անգամ խոսք էր տվե, հե՛լավ դնաց, խաղնի դուռը բացեց, թուրը հանեց, բերեց տվեց տղին, ու ըսավ.

— Աստու խաթեր, թեզ արի:

Տղեն էր, հ'ելավ, ընկավ ճամփա:

Շատ գնաց, քիչ գնաց, շատ ու քիչը աստված գիտե, հասավ մեկ լու տեղմ: Էդտեղ էրթըցած տեղը տեսավ օր գետնի վրեն մի լուարմ կը փեկըստե, ձին կը շիտկե, օր էրթա էդ լսին, Ղըո-աթը կըսե.

— Ալեքսան, մի' էրթա, էդտից քեզի վնաս գուբա:

Տղեն հ'անկաշ շի էնե, կըսե.

— Ձէ', էրթանք հըլը տեսնինք ի'նչ է:

Կէրթա կը տեսնի օր, ի'նչ, մե փետուրմ ընկած է գետնի վրա: Վերցնե, դնե կը ծոցը, գընկնի ճամփա, կէրթա:

Անծրեը մե կողմից վրա կառնե, տղեն տեսնի կօր իլլաճ չկա, անծրեը ետ շի առնե՝ դեմը մե մենձ քարափմ կէրևա, ձին կը քշե դեպի էդ քարափը:

Ձին կըսե.— Ա՛յ տղա, էդ քարափը լավ տեղ չէ, մի' էրթա:

Ինչքան կըսե, շի լըսե, է' ինչ արած, ձին էլ հ'անկաշ կէնե, կէրթա, կէրթան, քարափին հասնելուն պես՝ հինգ վեց հարամի հ'առաչ գուբան, կըսեն.

— Բարով ես էկե, բարով ես էկե:

Ձին կը քաշեն նեա, տանին կը կապեն, տղին կը տանին հ'օտի օղդի գլխը կը նստեցընեն, խուրշինով օսկին կը տանին էդտեղ վար կը դնեն, կէրթան Հարամ-բաշու քովը, կըսեն.

— Քելե, էնպես ավրմ ենք ձեռք քցե օր էսքան վախտ հեշ էդ-պես բան չէր պատահ:

Հարամ-բաշին գուբա տղին կը բարեն, կանշե կը էդոնց դուս, կըսե.

— Հ'իրիկունն օր մութը գըյնի, ճրագ չը վառեք, ես դուս գել-նիմ, էդ տղին կը տանիք կը մորթեք, թող ես շտեսնիմ: Օսկին ու ձին մեզի կը մնա:

Էդպես մուշավարա կէնեն, հ'իրիկունը մութը գընդնի, տղեն կը տեսնի օր ճրագ չեն վառե, բիրտան էդ փետուրը միտքը գըյնի, կը հանե ծոցեն, կը դնե վար: Էնպես լուս կուտա, օր տասը ճրագ վառես. էդպես լուս շի տա:

Մեկ էլ Հարամ-բաշին նեա գուբա, կը տեսնի օր, ի'նչ տեսնի, մե փետուրմ տղեն դրեր է հ'առաշը, շամ չրաղի պես լուս կուտա: Էդտեղ Հարամ-բաշու միտքը կը փոխվի, կըսե. ա՛յ տղին էլ չենք սրպանե, էս տղեն շատ պետքական տղա է»: Կէրթա ընկերներին կը կանշե, կըսե կը.

— Էլ չըսպանեք էս տղին:

Հիփոկոնը կը նստին, բերին իրեք հատ օշխար կը զարկեն սաղ սաղ շիշը, խորոված կէնեն. կը նստին բիտտուն կուտեն, քիչմ էլ տղին կուտան:

Հաց կերած վախտը Հարամ-բաշին տղին կըսե.

— Տղա,— կըսե,— էդ փետուրը հո՞ւրտից ես բերի:

Տղեն կըսե.— Ճամփեն եմ գտել:

Հարամ-բաշին կըսե.— Քեզից գուզեմ էդ փետուրի ղուշը:

Տղեն կըսե.— Հարամ-բաշի, ես հո՞ւրտից բերեմ էդ ղուշը:

Հարամ-բաշին կըսե.— Հո՞ւրտից գուզես բեր, չբերես՝ գլոխդ կը զարկեմ:

Տղեն իրեք օր մոհուկ կաննի, գիշերը կը քնին, առավոտը բարի լուսը կը բացվի (բացվի բոլորիդ վրա), տղեն դնլի կէրթա Ղրո-աթի քովը: Կէրթա Ղրո-աթի քովը, կսկսե լաց էղնիլ:

Ղրո-աթը կըսե.— Հա՛, ի՞նչ է, ինչի՞ գուլաս:

Տղեն կըսե.— Ի՞նչ էնեմ, ոչ բարով գայիք էստեղ, էկանք կրակն ընկանք: Հիմի էլ կայնեմ է Հարամ-բաշին, կըսե թե. «էդ փետուրի ղուշը գուզեմ, չբերես՝ գլոխդ կը զարկեմ»: Ես հո՞ւրտից բերեմ, տեղը բիլա չիտեմ:

Ղրո-աթը կըսե.— Հըպը ես քեզի օր կըսեի մի էրթա, դու ինչի՞ ընծի հանկաշ չէրիր: Ի՞նչ էնեմ, կը քցեմ քեզի ոտնեքիս տակը կը որորեմ, հըմը, հերդ ընծի ամանաթ է տվի, զնա՛ հորդ ղուրպան էղի: Քսանըհինգ տարի է հորդ աղ ու հացը կերել եմ, չեմ կրնա մոռանա:

— Դե լավ,— կըսե,— օր էդպես է, ի՞նչ էնենք: Գնա՛ Հարամ-բաշուն ըսա, թե ֆիլան ծովի ատեն, հարամ-բաշի եք, զնացեք քառուս սոմառ ցորեն ճամփորդներին թալենք, տարեք ֆիլան ծովի ատեն թե՛ն տվեք, օր ես էրթամ էդ ղուշը բերեմ:

էդ աղեն կէրթա ինչըդ օր Ղրո-աթը խրատ կուտա, կըսե Հարամ-բաշուն:

Հարամ-բաշին կը կանչե հարամոցը, կը հրամայե, օր էրթան ճամփոց վրեն անցնող դարցողին թալենն, տղի ուզածը պատրաստեն: Հարամիքն էլ գննն, կէրթան, համենքը մե ճամփեմ կը կըտրեն, որը մե սոմառ, որը էրկու սոմառ, քառսուն, հիթսուն սոմառ կը թըմըմեն, տանին կը լըցնեն ֆիլան ծովի ատեն: Մեկ մե՛նձ թե՛ն կէղնի:

Գուքան Հարամ-բաշուն կըսեն.— Հարամ-բաշի, պատրաստ է:

Հարամ-բաշին կէրթա տղի քովը, կըսե.— Տղա, քու ուզածդ հազը է, զնա՛ բեր:

Տղեն գելնի, Ղըռ-աթը դուս կը քաշե, կը հեծնի, հ'երեսը խաշ կը հանե, աստու անունը կուտա, կէրթա:

Կէրթա, կէրթա կը հասնի ծովի քովը, էդտեղ Ղըռ-աթը կըսն՝ հ'իշի:

Տղեն գիշնի, Ղըռ-աթը տղին խրատ կուտա, կըսե.

— Կէրթաս կը մտնիս թեճի մեջը, դու հեշ լես էրեւ. ձեռքերդ դեպի վեր կը բռնես ու կը կայնիս: Էրկու սըհաթ հետեւ դշերը դիմանան օր ծովի ատեն ցորեն կա, դուքան ուտելու էդ դշերու թագավորն էլ հետները դուքա, էնոնք օր կուտեն, դուշի թագավորը օրթեն կը կայնի, թեքը ծափ կուտա, կուրախանա, կըսե թե. «Փըռթի ենք փախցուցեա՛: Ղշերն օր ցորենը կուտեն, հետեն թեճը դիշնի, օր հ'իշավ, էդ դշի ոտները դուքա բուռդ գընկնի, դայիմ բռնե՛ Ղշերի թագավորն օր թեքը ծափ կուտա, մեկել դշերը բխտաուն կը թռնին, դշերի թագավորի ոտքերը քու բուռդ կը մնա, դու դայիմ բռնե՛: Մեկ ծափ կուտա, քեզի արշինմ վեր կը հանե, մեկ էլ ծափ կուտա՝ իրեք արշին քեզի վեր կը հանե, մեկ էլ օր ծափ տվեց, թե օր կըրցար դշին հաղթե՛՝ էն է օր կը բերես, օր լը կըցար՝ քեզի հանե կը երկինք, կը տանի կը ցըկե ծովերը, կը կորցընե՛ թե օր հաղթեցիր՝ ես քովդ կայնած կէղնիմ, թոիր վրես, ես քեզի կը պըրծըցնեմ:

Ինչըդ օր Ղըռ-աթը խրատ կուտա տղին, տղեն կէրթա կը մտնի էդ թեճի մեջը: Մեկ էլ կը տեսնի օր ի՛նչ, Ղըռ-աթի ըսածի պես հարուր հազարներով դշեր էկան ծափան էդ թեճի վրա, կսկսեն ուտել, հետեն թեճը գիշնի: Էդ դշերի թագավորը էն փետուրի տերն է էղե, էդիկ կայնի կը թեճի գլխուն, թեքը ծափ կուտա, դշերը կուտեն: Հետեն օր թեճը գիշնի, մեկ էլ էդ դշի թագավորի ոտքերը գընկնի տղի բուռը: Տղեն դայիմ կը բռնե՛: Ղշերի թագավորը թեքը ծափ կուտա, դուզե օր թռնի, տղեն ոտքերից բռնած է, չի կրնա թռնի, մեկել դշերը բխտաուն կը թռնին: Ղշերը օր կը թռնին, կը մնա էդ դշերու թագավորը, մեկ ծափ կուտա օր թռնի, մե արշինմ տղին կը բարձրացընե գետեն, մեկ էլ ծափ կուտա, իրեք արշին կը բարձրացընե գետեն, մեկ էլ օր ծափ կուտա՝ էն է օր պըտի հանե երկինք, տղեն սրտի կսկըծից էնպես ուժով կը քաշե դշին օր, դուշը էլ չի կրնա հանե երկինք: Ղշին կը քցե գետին, էն սհաթին Ղըռ-աթը կողքը կը կայնի, կըսե.

— Ապրիս, Ալեքսան շան, արի հեծի, էրթանք:

Տղեն կը հեծնի Ղըռ-աթը, աթա հարաքաթ, ղամշիա բարաքաթ, սուր հա սուր, կէրթա Հարամ-քաշու տունը:

Հարամ-բաշին դուս գելնի, կը տեսնի օր տղեն էկավ, հարամոնց կը կանչե, կըսե.

— Տարեք տղի ձին կապեք, տղին հաց տվեք թող ուտե:

Հարամ-բաշին ղուշը տղի ձեռքեն օր կառնի, խելքը կէրթա՝ ինքան օր էդ ղուշը սիրուն էր, վրեն հ'արեղրկի պես կը փնկըստեր: Կը տանի էդ ղուշը իրանց բախլի սավլի շինարի վրա կը դնե, ամեն օր կէրթա սելը կէնե, խելքը կէրթա:

Հինդ, տասն օր կանցնի էդպես, մե օրմ հարամիքը կըսեն Հարամ-բաշուն.

— Հարամ-բաշի, շատ լավ ղուշ է, հըմը ի՞նչ օգուտ օր կարելի է սատկի, հեշ չէ, էսօր հավկիթները էղնիր, թուխս դնեինք, ձագեր հաներ, օր քոքը հեշ չկտրիր:

Հարամ-բաշին կըսե. — Էսօր հավկիթը հ'ո՞ւրտից գտնինք:

Հարամոնց մեկը կըսե. — Ի՞նչ կա օր, ղուշը բերող տղի համար հավկիթ բերելը ինչ մե չաթին բանմ է:

Հարամ-բաշին էլ էդպես բան գուղեր օր լսեր:

Կանչե կը տղին, կըսե. — Տղա, — կըսե, — շնորհակալ եմ, գնացիր ղուշը բերիր, հըմը ի՞նչ օգուտ օր, հավկիթները չես բերե. կարելի է սատկի, հ'ետև քոքը կը կտրի, էլ ինչո՞ւ պետք է: Քեզնից էսօր հավկիթները գուղեմ, կը բերես՝ լավ, չես բերե՝ զոխդ կը պարկեմ:

Տղեն իրեք օր մոհուլ՝ կառնի, գուքա Ղըո-աթի քովը:

Կըսե. — Էս ի՞նչ կրակն ընկանք, հիմի էլ, — կըսե, — Հարամ-բաշին կայնել է՝ ղշի հավկիթները գուղե, ես հ'ո՞ւրտից բերեմ, տեղը թիլա չիտեմ:

Ղըո-աթը կըսե. — Սուշը քուկդ է, ես օր քեզի ըսի, էդ ճամփեն մի էրթա, ես քեզի դուշմա՞ն էի, ի՞նչ էնեմ, ես քեզի սազ չէի թողնի, հըմը հորդ խոսքը չեմ կըրնա կոտրել: Լավ, — կըսե, — արի մե լավմ թիմարե ընձի:

Տղեն Ղըո-աթին լավմ կը թիմարե, քիշմիշը կը լցնե հ'առաջը, կուտան: Դուս կը քաշե Ղըո-աթին, կը հեծնի:

Ղըո-աթը կըսե. — Շ'աչքերդ խփե, հըմը հ'ամուր կեցի վրես, օր չընկնիս:

Տղեն հ'աչքերը կը խփե: Մեկել, Ղըո-աթը ինքը հրեղեն ձի էր, գելնի հ'երկինք. գելնի հ'երկինք վերթին կէրթան, աստված գիտե, մեկ էլ տղին կըսե. «Շ'աչքերդ բաց»: Տղեն հ'աչքերը կը բանա, կը

տեսնի օր ինչ, ահագին բանձրութեան սարիս տակ կայնած է: Ղըռ-աթը կըսես՝ հիշի:

Տղեն գիշնի Ղըռ-աթից: Ղըռ-աթը տղին խրատ կուտա, կըսես.

— Գնելիս էս սարի գլխը, էնտեղ իրեք հատ ղոժտ կան, մեկ էլ մե մերմ ունին: Հիմի էն ղոժտերը քընած կէղնին, հացի վախտ պըտի էղնի օր հիւնին հաց ուտեն: Դու կէրթաս,— կըսես,— էդ ղոժտերի քովը կրակ կը վառի, էդ կրակի վրա դրած է մե մենն մայա պղինձ, էդ պղինձի մեջը օխտը հատ օշխար կա լըցած, կէփեն օր էդ ղոժտ տղեքը հիւնին ուտեն: Ինքն էլ մե լտրանոց ձութը քցեր է բերանը, կը ծամեն՝ աչ ծիծը քցեր է ձախ ուսը, ձախ ծիծը քցեր է ա ուսը, հետեկից կախ են ընկն, մե թեշիկմ էլ ձեռքը կը մանե, պուշը դոճա գերան մէ, գլխը մե ջախշի քարմ, կէղնի հարուր փութ.— կըսես,— կէրթաս—էնտեղ մե պզտի ծառմ կա, վրեն էդ ղշի բունն է, մեջը շորս հավկիթ կա, գելնիս ծառը, բնից կառնես հավկթները, կը դնես ջերդ ու կը վազես ընձի կը հասնիս, օր չհասար, ղոժտերը հիւն քեղի բունեցին, սաղ թիքեդ հանկաջդ կը թողնեն:

Ղըռ-աթը տղին խրատ կուտա ու ինքը էդ սարի տակը կը մնա. տղեն կէրթա: Կէրթա կը տեսնի օր Ղըռ-աթի ըսածի պես սարի գլխը մե կրակմ կը վառի, մե մենն մայա պղինձմ վրեն դրած, օխտը օշխար մեջը կէփի: Իրեք ղոժտ էլ էնպես դրաղը քնած են, մե պառավ կնիկմ էլ տղոց ղլխու վերեւը նստած է, ձութ կը ծամե ու թեշիկ կը մանե:

Տղեն կէրթա կը մոտենա էդ կրակին. չըբուխը կը վառե, էդ պառվին էլ մեկ-մեկ կը խորտե, կէրթա գելնե ծառը, հավկթները կառնե կը դնե ջերն ու վազե կը դերի Ղըռ-աթը:

էնիկ օր կը վազե դեպի Ղըռ-աթը, պառավը ինքն իրան կըսես. «Ջանըմ, կըսես, հըլը էդ տղին աչե, օձն իրան պորտով, ղուշն իրան թեով էստեղ շէր կընա գա, էդիկ էկավ էստեղ, չըբուխը վառեց, ընձի էլ խորրտեց, հեշ լվախեցավ, ղշի հավկթներն էլ առավ, աշե հըլը, կէրթա»: Ու ինքն իրան կը ծիծաղե, կըսես. «Հըմի տղոցս ձեն չտա՞մ հիլին էդոր սաղ թիքեն հանկաջը թողնին»:

էդ խոսքի վրա ծափ կուտա, ծափ տալու պես տղեքը գելնին, կըսեն.

— Հը՛, մամի, ինչ կա, աշխարքը շինե՞նք, թե քանդենք:

— Տո,— կըսես,— հըլը սեյր էրեք, ինտեղ օր մե տղեմ կէրթա, տեսնի՞ք կը: էկավ էստեղ չըբուխը վառեց, պղինձի բերանը բացեց, մեջը աչեց, էկավ ընձի թարս-թարս խորրտեց, հիւլավ ծառը, հավկթները վար առավ, հըլը կէրթա, հեշ շի էլ վախենա:

Տղերք էդ խոսքը մորից լսելու պես՝ զընգնին տղի հետևը, օր
բռնեն, տղեն կը տեսնի ու զըյնի Ղըռ-աթի քամակը՝ Ղըռ-աթը էն
դախին կը հանէ հ'երկինք։

Ղովտերը օր կը տեսնին օր Ղըռ-աթն է, տասնըհինգ տարի հ'ա-
ռաջ էնոր հետ կռիվ են ունեցի, փարփուն կերել են, կըսեն,

— Գնա՛, ղուրբան էղի Ղըռ-աթին, օր Ղըռ-աթը չէղնիր, դու
մեր ձեռքից չէիր պրծնի։

Ղովտերը կը տեսնին օր Ղըռ-աթը տարավ, կը թողնեն հտ-կը
դառնան։

է՛, Ղըռ-աթն էր, շատ կէրթա, քիչ կէրթա, շատն ու քիչը աստ-
ված գիտի, կէրթա կը հասնի Հարամ-բաշու տունը, խաբարը կէրթա
Հարամ-բաշուն, թիւ. «Տղեն էկավ, հավկըթները բերավ»։

Հարամ-բաշին գելնի տղին կը տեսնի.— Ապրիս.— կըմե, — զո-
րանսու։

Հարամոնց կը հրամայէ, ձին կը քաշեն նես, տղին կը աանին
հաց կուտան, ինքը հավկըթները կառնի, կը տանի դնէ դշի տակը,
թուխս կը դնէ։ Քսանը մեկ օրը կանցնի՝ ղուշը չորս հատ ձագ կը
հանի, Հարամ-բաշին ուրախութենից շիտե, թիւ ի՛նչ էնէ։

էդ Հարամ-բաշին է, դշերի ձագերը ծախելով, տղի խորշին՝
օսկին ուտելով մենձ կարողութեն կը դիզի։

Մե օրմ էդ Հարամ-բաշին ուրախութենից թոփ էրավ ինչքան
հարամի ունի, մե լավ քեֆ ուրախութեն սարքեց, Քեֆի վախտը
հարամու մեկը վերուց Հարամ-բաշուն ըսավ.

— Մեղի հեշ բան պակաս չէ, հըմը քեղի մե բանմ պակաս է։
Հարամ-բաշին կըսե.— Ի՛նչ է պակաս ընձի, հեշ բանմ էլ պա-
կաս չէ։

Հարամին կըսե.— Հարամ-բաշի, թիւ օր մե հուրի փերու աղջիկ
էլ էղնի, օր քեզի կնիկ կըլնի. էլ աշխրբի մեջ քեղ բան պակաս չի
կըլնի։

Հարամ-բաշին կըսե.— Կա՛վ, հըմը հուրի փերու աղջիկ հ'ո՛ւր-
տից գտնինք։

— Զ'ե, — կըսե, — էդ ղուշ բերող, էդ հավկըթները բերող տղի
հմար ինչ մե չաթին բան է։

— Հարամ-բաշին կըսե.— Օր էդպես է՝ կանչեք տղին։

Հարամու մեկը կէրթա տղին կը կանչէ, տղեն գուքա բարն կը
բռնէ, կայնի կը դիմը։

Հարամ-բաշին կըսե.— Տղա, գիտե՞ս քեղի ընչի՞ եմ կանչի։

Տղեն կըսե.— Ընչի՞։

— Էրթաս պըտի ֆիլան երկրից հուրի փերու աղշիկը բերես, թե օր լսերիր՝ գլոխդ կը զարկեմ:

Տղեն վախենալուն իրեք օր մոհուլ առավ, զնաց Ղըռ-աթի քովը: Ղըռ-աթին պատմեց Հարամ-բաշու ըսածները:

Ղըռ-աթն ըսավ.— Շատ լավ, դաթի մենք էլ էդտեղ պըտի էրթայինք:

Ղըռ-աթը տղին կըսե.— Գնա՛ Հարամ-բաշուն ըսա՛.— Եոսուն փթանոց զըռխըմ շինել տա:

Տղեն կէրթա Հարամ-բաշուն կըսե. Հարամ-բաշին էն սհաթին կէրթա գամըրճոցը շինել կուտա, կը բերե, կուտա տղին: Տղեն կառնե գուքա Ղըռ-աթին կը հագցընե, Ղըռ-աթը մեկ թափտալու պես կը պատռե, էն կողմը կը թապլե, կըսե.

— Էս հեշ, զնա, քառսուն փթանոց շինել տուր, հըլը դվաթս տեղն է, շատ շեմ ծերացել:

Տղեն կէրթա Հարամ-բաշու քովը, կըսե.

— Հարամ-բաշի, էն զըռխը ձիս պատռեց, հըմի քառսուն փթանոց գուզի:

Հարամ-բաշու փո՞ղն էր պակաս, զնաց հըմի էլ քառսուն փթանոցմ շինել տվեց, բերեց տվեց տղին:

Տղեն տարավ Ղըռ-աթին հագցուց նորից: Ղըռ-աթը էս անգամին էլ թափ տվեց, տեսավ օր չէ՛, լավ է:

Ըսավ,— Շատ լավ, ծալե զըռխը, կապե մեշքս, դու է՛լ հեծի էրթանք:

Տղեն կապեց զըռխը, հ՛ելավ հեծավ ձին ու ընկավ ճամփա:

Շատ զնաց, քիչ զնաց, շատ ու քիչը աստված գիտե, զնաց հասավ մե անվերի ծովիմ քով: Էդտեղ տղին ըսավ՝ հ՛իշի:

Տղեն հ՛իշավ, զըռխը հ՛իշեցուց, հագցուց Ղըռ-աթին:

Ղըռ-աթը տղին ըսավ.— Ալեքսան, արի իրար պազնենք, վով դիտե, էղնի օր էրթամ ծովերի տակը, էլ ետ շղառնամ: Ես գընկնիմ ծովը, դու էստեղ կը նստիս, չրի մեջը կաշես, քիչմ հ՛ետե կը տեսնիս օր հ՛արնչուր գելնի, շես վախենա, քիչմ հ՛ետե էլ հորդ աչքերու դեղը ղովթիկով գելնի, հ՛ելնելու պես՝ վերու ու կոխե ծոցդ: Քիչմ էլ կսպասես, ես մե ձիում բռնած խեղառտելով կառնիմ գուքամ, թե օր էկա, զաթի շես վախենա, թե օր չէկա՝ փախի օր ուրիշ ձիանք չգան քեզի խեղդեն:

Տղեն էդտեղ կը նստի, կը տեսնի օր ծովի հ՛երեսը քիչմ հ՛արուն հ՛ելավ, քիչմ էլ կանցնի, կը տեսնի օր մե ղութիկմ հ՛ելավ, հըմը ձեռքը կը քցե ու վերցնե, կոխե կը ծոցը: Քիչմ էլ կսպասե, կը տես-

նի օր Ղըռ-աթր հուշացավ, կսկսե լալ Քիշմ դուլա, մեկ էլ տեսնի կօր Ղըռ-աթր մե ձիուն խեղտոտելով դուս կը հաննի:

Դուս օր կը բերե, դու մի քսե, էդ ձին Ղըռ-աթի քուրն է, քանի տարի օր Ղըռ-աթը հողածինների քովը կապրի, էդոր հմար յա-տուցել են իրարուց:

Ո՛հ օր ձիուն դուս կը բերե, ձին կը խեղճընա, Ղըռ-աթին կըսե.

— Ղըռ-աթ ջան, հարի հմի դուղեի օր քեզի ծովի մեջը թողնեի, որ չըկըրցա, հմի դու ինչ օր դուղես ըսա՝ ես կը կատարեմ:

էդ ձիուն կըսե. — Յաղըզ¹ ջան, ես, — կըսե, — քանի տարի է ծովից հեշել եմ, դուղեմ օր ծովից անցնինք, էրթանք փերու աղջիկը բերենք, վախենամ կը էս ծովի ջանավարները ընծի վնասեն, քեզի բան չեն կեն, տղեն թող հեծնի քեզի, ծովը անցուր, տղեն օր հուրի փերու աղջիկը կը բերե, կը վերցնես կը բերես ընծի կը հասցնես:

Յաղըզ ձին կըռե. — Շատ լավ, քու խաթերդ ինչ էլ օր էղնի, պրտի էնեմ:

Ղոճա Ղըռ-աթը էդտեղ կը մնա ծովի քյանարը:

Տղին կը հեծնի Յաղըզ ձիուն: Յաղըզ ձին էլ, ինքը հրեղեն ձի, էն բուպին կը թռնի երկինք: Մովից էնպես կանցնի, օր տղեն հեշ լիմանա, թե որմանը տարավ իրան: Մեկ էլ մե քյոշկիմ հառաջը հեշուց: Ինչըդ օր Ղոճա Ղըռ-աթը տղին խրատ էր տվե, տղեն քովը ունեը քառսուն խնձոր: Քառսուն խնձորը էնոր հմար էր տարե, օր էդ աղջիկը քառսուն նարտըվանից բանձր էր, ամեն նարտըվանին մե խնձորմ պըտի քցեր, օր աղջիկը իշնիր վար: Թե օր աղջիկը խարեր տղին, վեր տաներ, տղեն քանի սաղ ու կենդանի էր, էնտեղ կը մնար, էլ չէր կրնա ետ դա:

Տղեն էդ Յաղըզ ձիուն ըսավ.

— Դու իստեղ կեցի, ես էրթամ էս քյոշկի մեջը:

Տղեն դնաց, մեկ էլ տեսնի օր, ի՞նչ, մե բանձր տեղմ մե լսի կտոր աղջիկմ կայնած է, օր օխտը դանատ չես կրնա երեսին աշե, էնբան օր սիրուն է:

Աղջիկը տղին տեսնելուն պես՝ կըսե.

— Համեցի վեր, համեցի վեր, էս տասը տարի է քու սերդ կը քաշեի:

Տղեն կըսե. — Չէ՛, դո՛ւ արի ընծի վեր տար:

Կըսե ու մե խնձորմ կը քցե վեր: Աղջիկը նարտիվանըմ գիշնի՝

¹ Սե ձի (Մ. Բ.).

վերցնելու, մեկն էլ կը քցե՝ էնորից վար, էլի գիշնի, կը վերցնե, մեկն էլ կը քցե, Խուլասա, գլոխներըդ չը ցավցընեմ, քառսուն խըն-
ձորն էլ մեկ-մեկ կը քցե, աղջիկը գիշնի քառսուն նարտիվանից էլ
վար, Օր գիշնի տղի բովը, տղեն բռնե պագե կը ու էլ բաց չի թող-
նի, Աղջիկը շատ ճվա, գուլա, չի ուղի տղի հետ էրթա, հըմը տղեն
մե անգամամ ամուր բռնել է, աղջկան կը քաշե գսի գուռը, Յաղըզ
ձին էդտեղ պատրաստ կայներ էր, հըմը կը հեծնի ձին ու աղջիկը
կառնե թարթը, ու—Յաղըզ,— կըսե,— տեսնիմ քեզի, ինձի հասցնես
Ղըռ-աթի բովը:

Յաղըզ ձին էն բոպինի յալլաի էնելու պաշտան՝ կը թռնի, դո-
ճա Ղըռ-աթի բովը կը կայնի Օր Ղըռ-աթի բովը կէրթա, Ղըռ-աթի
կըսե.

— Յաղըզ յան, Ալիքսանը քեզի կը հեծնի, Փերի ղզին էլ ընձի
կը հեծնի, էրթանք, զրոխն էլ կը թապլեմ ծովն օր թեթևանք:

Ախպեր, էդտեք գելինին՝ ճամփա գըյնին Քիշմ կէրթան մեկ էլ
Ալիքսանը ետ դառնա կաշե օր՝ ինչ տեսնի, էրկու հարուր ձի հետե-
ներից ընկած գուքան կը:

Յաղըզ ձիուն կըսե.— էս ի՞նչ ձիան ես, մեր հետեից գու-
քան կը:

Յաղըզ ձին ըսավ.— էդտեք Փերու ղզի համամն՝ ես:

Ալիքսանը ձեն չի հանե: Գընկնին ճամփա, ախպեր ջան, քաղքե
քաղաք, գեղե գեղ, սարե սար, ձորե ձոր կանցնին գելինին դուքան
Հարամ-բաշու բլոշկը:

Հըլը օր չէին հասե, Փերի ղզին Ալիքսանին կըսե.

— Ընձի ո՞ւմ հմար կը տանիս: Գիտեմ,— կըսե,— Հարամ-
բաշու հմար կը տանիս, հըմը ես էնոր կնիկ էղնողը չեմ: Ես էնոնց
գլոխը ինչ քյալակ օր հանեմ, դու հեշ չվախենաս: Դու ես ընձի բերե.
ես քեզի էլ կնիկ կէղնիմ:

Օր դուքան հասնին կը Հաբամ-բաշու բլոշկը, Հարամ-բաշին օր
աղջկան կը տեսնի, խելքը գլխեն կէրթա: Էն սըհաթին կը տանին
մե լավ օթախմ կը դնեն էդ աղջկան, կէրթան էդ էրկու հարուր ձիուն
տանին մե աղալըմ կենեն: Իրիկունն օր մութը գըյնի Հարամ-բաշին
դուգե օր էրթա աղջկան տեսնելու:

Աղջիկը օթախն օր մտել է, դուռը նստից կողպել է ու նստել:
Հարամ-բաշին օր դուռը կը զարկե, աղջիկը կըսե.

— Էդ վո՞ւմ է:

¹ Բաղնիք (Մ. Բ.):

Հարամ-բաշին կըսէ.— Ես եմ, Հարամ-բաշին, դուռը բաց:

Աղջիկը կըսէ.— Ես դուռը չեմ բանա, առավոտը արի, ես քեզի յանըմ կըսեմ, հ'հտե, ես քուկդ եմ, դու՛ իմա:

Հարամին ի՞նչ էնեք, Փերու աղջկա հրաման էր, հ'ելավ գնա՞ իրան տեղը, ընկավ քնավ, հըմը էդ գիշերը դառավ իրան հմար ամիս, մինչև օր լուսացավ, հարամունն էլ իրան հասավ:

Առավոտը բարի լուսը բացվավ, բացվի բոլորիդ վրեն (օղորմի հորդ) Հարամ-բաշին է՛լ շկրցավ համփիրե, հ'ելավ գնաց Փերու աղ-ջրկա դուռը նորից զարկեց: Աղջիկը դուռը բացեց, դուս հ'ելավ, ինքը խելացի աղջիկ, դաքը մեջը սիլիթիլի էրավ, առավ դնաց խաս բախ-լեն, ըսավ.

— Էստեղ էրկու հատ լավ համամ կը շինես, օր էդ ձիանը կթենք, լցենք մեշը, մեկի մեշ դու լողանաս, օր ընձի պես անմա-հական դառնաս, մեկելն էլ հարամոցը լողցընենք, օր էնոնք էլ հրե-դեն դառնան:

Հարամ-բաշին ըսավ.— Շատ լավ:

Կանչեց հարամոցը, դրկեց քանիմ հատ ուստա բերել տվեց. յաղնիքը մե օրվա մեշը շինել տվեց: Օր շինեցին պրծան, աղջիկը բերեց ձիերը, հարուրին մե բաղնիքի մեշ կթեց, հարուրին էլ մե: Ը՛հտե կանչեց իրան բերող տղին: Հարամիքն ու Հարամ-բաշին բիտտուն էդտեղ կայնտծ էին:

Էն բաղնիքն օր լավն էր, էդ տղին ըսավ.

— Ձեռքդ կոխե՛ էդոր մեշը:

Տղեն ձեռքը կոխելու պաշտան էնպես ճերմկավ, օր դառավ հրեղեն ձեռք:

Աղջիկը դառավ Հարամ-բաշուն ըսավ.

— Խո տեսար էդ տղի ձեռքը, դուք էլ պըտի բիտտունդ գաք էդ համամի մեշ մտնիք, օր հրեղեն դառնանք, օր նոր ես քեզի հետ պսակվիմ:

Հարամ-բաշին ըսավ.— Շատ լավ:

Գիտեին թե էրկու բաղնիքն էլ մեկ է: Բերեց բիտտունին էլ ւը-ցեց մեկել բաղնիքը, դուռը քաշեց վրա ու արեց: Տասը ըռպե շան-ցավ բիտտուն խաշան:

Էդոնք թող էդտեղ խաշին:

Աղջիկը Ալեքսանին կանչեց, էն մեկել բաղնիքի մեշ լողցուց: Ալեքսանը դառավ էնպես հրեղեն, ինչըղ օր ինքն էր:

Դառավ աղջիկը Ալեքսանին ըսավ.

— Է՛, Ալեքսան շան, հարամոնց բիտտունին խաշեցինք, մնա-

ցինք ես ու դու Բեր, էստեղ ինչ կա չկա վերցնենք, հ'ելլինք էրթանք:

Հ'ելավ Ալեքսանը աղջկան առավ, գնացին մտան Հարամ-բաշու տները, իրանք հեշ մե րանիմ էլ կարոտ չէին, էրկու հատ դուշ էր մնացել, էդ դշերը վերցուցին, մե խուրջինմ էլ օսկի վերցուցին: Աղջիկը հ'ելավ դուս, էդ էրկու հարուր ձիուն ճամփու քցեց, գնացին թափան նորից ծովը:

Հ'ելան ղոճա Ղըռ-աթին ու Յաղըզ ձիուն քաշեցին դուս, ղոճա Ղըռ-աթին հեծավ տղեն, Յաղըզ ձիուն էլ աղշիկը, թողին էդ տները անտեր անտիրական, իրանք ընկան ճամփա, գնացին դեպի տղի հոր երկիրը: Աթա հարաքյաթ, դամշիա բարաքյաթ, սուր հա սուր, գնացին հասան մե մենձ սարիմ տակ, էդտեղ մութն ընկավ:

Ալեքսանն ըսավ ղոճա Ղըռ-աթին, — Հ'իշնինք էստեղ գիշերը մնանք, առավոտը դիլնինք կէրթանք:

Հ'իջան էդտեղ, ախպեր ջան, նստան հաց կերան, քիչմ գինշացան, մեկ էլ Ալեքսանը աչքերը վերուց դեպի սարի ղլոխը, տեսավ օր ինչ՝ մե լուսմ կէրկա:

Ղոճա Ղըռ-աթին ըսավ. — Ղոճա Ղըռ-աթ, ես պըտի էրթամ էդտեղ, տեսնիմ էդ ի՞նչ լուս է կէրկա:

Ղոճա Ղըռ-աթը տղին ըսավ. — Ա՛յ տղա, էն վախտվա դյուզանը մի՛ էնե, էդտեղ վնասավոր տեղ է:

Տղեն հ'անկաշ չէրավ. — Չէ՛, պըտի էրթամ:

Ղոճա Ղըռ-աթը տեսավ օր զավթ չի էղնի, ըսավ.

— Դնա՛, էդտեղ էրկու դե կա. էդ դեերը էրկու թագավորի հետ կովիլ են, ամենքը մեկի աղջիկը փախցրել բերել է, էդտեղ պահեն կը. էդտեղ մե մենձ մաղարեմ է, դեերը հիմի քնած են, հըմը էնտեղ դուս հ'առաջը էրկու ձի կա, մեկը դըռ է, մեկը տոռ՝ է: էդ Տոռ ձին դեի հոգի ունի, դեերի կողմն է, հըմը էն Ղըռ ձին ինսընի հոգի ունի, ինսընի կողմն է: Քեզի օր տեսնի, Տոռ ձին վրա կը հասնի, օր փարանգ-փարանգ էնե, հըմը Ղըռ ձին կը հասնի Տոռ ձիուն, կը փաթըթվին, իրար հետ կը կովին: Դու աշխատի Ղըռ ձիու կողքին անցնիս ու ընկնիս մաղարի մեջը: Եփ օր գնացիր դեերուն սըպանեցիր, աղջիկներուն կառնես գուքաս, էդ վախտը Տոռ ձին էլ կը խեղճընա, մեկը մեկին կը հեծըցնես, մեկն էլ էրկուսըդ կը հեծնիք ու գուքաք:

Ինչըդ օր ղոճա Ղըռ-աթը խրատ կուտա, տղեն գիլնի կէրթա, կը տեսնի օր ի՞նչ, ղոճա Ղըռ-աթի ըսածի պես էրկու ձի մե դուսմ հ'առաշ կայնած են:

¹ Կարմիր (Մ. Բ.):

Տոռ ձին տղին տեսնելու պաշտան վազի կ'օր տղին փարանգ-
փարանգ էնե, հըմը Ղըռ ձին վրա կը հասնի ու կսկսե կովել:

Ղըռ ձին Տոռ ձիու բկեն կը բռնե, էդտեղ շարաւամիշ կէղնին,
հըմը տղեն վազգի կ'ու Ղըռ ձիու կողքեն գըյնի մաղարեն:

Տղեն տեսնի կը օր, ի՛նչ տեսնի, էրկու լսի կտոր աղչիկ նըս-
տեր են:

— Ա՛յ հա՛յ տղա,— կըսեն,— էս ինչ բան է, դու Տոռ ձիու
ձեռքեն ի՛նչըդ ազատվար օր էկար էստեղ:

Տղեն կըսե.— էդպեսներո՞ւ ձեռքեն եմ ազատվել:

Աղչիկները կըսեն.— Տղա, աստու խաթեր, ի՛նչ էնենք հիմի դե-
վերը կը դարթնին, քեզի լիմա-լիմա կէնեն, փախի պրծի, քանի օր
յեն զարթե, թե չէ մենձ թիքեդ անկաջդ կը թողնին:

Տղեն կըսե.— Ես էդպես դներ շատ եմ տեսն, հ'ո՞ւրտեղ են, դուք
տեղը ընծի ըսեք:

Աղչիկները խրատ կուտան տեղը: Տղին կըսեն,— Տղա, դիտե՛ս,
մե դեին իրան թուրը պտի էղնի օր գլոխը կտրե, ուրիշի թուր չի
կտրի:

Տղեն կըսե աղչիկներուն.— Իրան թուրը հ'ո՞ւրտեղ է:

Կըսեն.— էդտեղ մե մենձ կարասմ կա, էդ կարսի մեջն է:

Տղեն կուզ կը կենա, կարսից թուրը կը հանե, կէրթա կը տեսնի
օր, ի՛նչ տեսնի, էրկու աղբհիլի պես դներ պառկեր քներ են: Զորս
սհաթ է մնացեր, օր դարթնին: Քաշե կը թուրը, մեկին զարկելու պես՝
գլխը գըյնի էն կողմը:

— Այ հա՛յ,— կըսե,— իսան օղլի, մեկ էլ զարկ:

— Զէ՛,— կըսե,— ես մորես մեկ եմ էղե, չեմ զարկե:

Մեկ էլ թուրը կը քաշե մեկել դեին կը զարկե, էնոր գլխն էլ
կը թռնի:

— Վա՛յ,— կըսե,— քեզի խրատ տվողի վիզը տակը մնա, մեկ
էլ զարկ:

Տղեն էլի կըսե.— Մորես մեկ եմ էղե, չեմ զարկե:

Օր զարկեր՝ էրկուսն էլ կը սաղնային նորից:

Տղեն էն սհաթին դեինի՝ դուքա աղչիկներու քովը, կըսե.

— Հ'եկեք, աղչիկներ, էրթանք:

Աղչիկները կըսեն.— Աստու խաթեր, դները դուքան մեզի հա-
զար կտոր կէնեն: Էստից տասը տարի հ'առաջ էկան մեր հոր ղոշու-
նի հետ կովան, շարդեցին, մենք էդ թագավորների աղչիկներն ենք,
խլեցին մեզի, բերին էստեղ:

Տղեն կըսե.— Հե՛լ միք վախենա, դներին սըպանել եմ, արխեն
էղեք, դուզեք զնացեք տեսեք:

Աղջիկները կէրթան կը տեսնին օր, ի՞նչ տեսնին, դեերու գլոխները օխտը թիզ հեռու են ընկած ջանդակներէն:

Աղջիկները ուրախ ուրախ գելնին գութան տղի քովը, կըսեն.— Ապրիս տղա, օր մեղի էս տեղից պըրծըցուցիր:

— Է՛,— տղեն կըսե, — աղջիկներ, հիւնք էրթանք, էլ էստեղ մնալը մեղի հարամ է:

Տղեն աղջիկներուն կառնի, գելնի դուս՝ կը տեսնի օր Ղըռ ձին Տոռ ձիուն խեղճըցուցեր է:

Տոռ ձիուն կըսե.— Տո՛ւ ձի, հմի ի՞նչ կըսես, մեր գինի պըտի դառնաս, թե գլոխդ կտրեմ:

Տոռ ձին կըսե.— Աղա.— կըսե, — ես քու ծառադ եմ, ինչըդ օր գուգես, էնպես էրա:

Աղջիկներուն կը հեծըցընե մեկը մե ձիուն, մեկն էլ մե ձիուն, ինքն էլ գամերը քաշելեն կէրթա Ղըռ-աթի քովը: Կէրթա կը տեսնի օր Ղըռ-աթի հերսը հելեր է, տղի ճամփեն կաշե կը:

Տղեն օր կէրթա դոճա Ղըռ-աթին քովը, դոճա Ղըռ-աթը կըսե.— Ա՛յ տղա, ինչ կէնես, ախրր, հերդ հիմի մեղի կաշե, վեպ գիտե գլոխն ի՞նչ է էկե: Տարիմ է. օր մենք հեռացել ենք մեր հողից, հիմի ուրիշ թագավորներ իմացել են, էկել են հորդ վրա կոխվ: Իրեք սըհաթվա օր չհասնինք հորդ բանը բուրդ է, իազնի բալնիքը կառնին ձեռքեն:

Տղեն հըմը շափուկ-շափուկ ձիանը կը սարքե, աղջիկներուն կը հեծըցընե էն էրկու ձիուն, ինքն ու էն հուրի Փերի աղջիկը կը հեծնին դոճա Ղըռ-աթին, գըյնին ճամփա, կէրթան:

Շատ կէրթան, քիչ կէրթան, շատ ու քիչը աստված գիտե, կէրթան կը հասնին իրան հոր քաղաքի քովը: Կը հասնին քաղաքի քովը, մութը դընկնի: Տղեն գիշնի ձիուց, էդտեղ շատը կը զարկե, կը տեսնի օր, ինչ տեսնի, հոր քաղաքի շորս բուրըրը ղոշունը պատել է: Աղջիկներուն ու էդ էրկու ձիուն կը թողնե շատըրը, ինքը կառնե դոճա Ղըռ-աթը, կէրթա էդ ղոշունի էս գլխեն կը մտնի, էն գլխեն գելնի: Մե կողմեն եթմիշ արշինանոց թուրը կը գցե, մե կողմից էլ դոճա Ղըռ-աթը կը շարգե ոտներով:

Էդտեղ ղոշունի հետ կովելու վախտը դոճա Ղըռ-աթը մե դայիմ կը խըրխընջա: Խըրխընջոցը գըյնի թագավորի հանկաջը, էն էր թագավորը խազնի բալնիքը պըտի տար, դոճա Ղըռ-աթի ձենը առնելուն պես, կըսե. «Փառք քեզ աստված, դոճա Ղըռ-աթս էկեր է, էլ չեմ տա»:

Իրիկունը կը քնին, առավոտը բարի լուսը կը բացվի, բացվի բիտտունիդ վրա (ունկնդիրներն ասում են ռօղորմի հորդա), մեկ էլ

Թագաւորին խապար կը բերեն, թե. «Թագաւոր ապրած կենա, քաղ-
սի շորս բոլորի ղոշունը բիտտուն ջարդած է, արունը դյոլ է բռնեմ»:

Թագաւորը կը հասկնա էն սրհաթին, օր ղոճա Ղըռ-աթի էրածն
է, աշխարք իրան կուտան:

Թագաւորը թող մնա էդտեղ, մենք էրթանք տղի ու ղոճա Ղըռ-
աթի քովը:

Տղեն է, օր ղոշունը կը ջարդե, կը լլըրծնի, կէրթա քիւմ շատրը
կը գինջանա, գելլին կը հեծնին ձիանը, գըյնին ճամփա, աթա հա-
րաթաթ, դամշիա բարաթլաթ, սուր հա սուր, կէրթան կը հասնին
Թագաւորի քաղաքը:

Ղարաուլները ալքի լուս կէրթան Թագաւորին, թե. «Տղեդ էկավ,
իրեք աղջիկ էլ հետըս: Թագաւորը հիմանալուն պես քոռ քոռնա
հլավ՝ նարաւըլըններին գլորվելով հիշավ ղուռը: Տղեն հըմը հորը
տեսնելուն պես ալքերը հանեց ղութիկով, տվեց հորը, դրին ալքե-
րու վրա, շրով լվացին, սաղցավ:

Հերը, ալքերը սաղնալու պես ընկավ տղի վիզը, խելքն անցավ:
Իհրին մե քիւմ ջուր գարկին հերեսին, այլըցավ:

էն սրհաթին Թագաւորը գնաց իրան ձեռքովը ղոճա Ղըռ-աթին
տարավ իրան տեղը, թուրն էլ դրեց իրան տեղը, կանչեց տղին, գնա-
ցին Թագաւորի թախտը:

Թագաւորը իրան Թագը վերուց գրեց էդ տղի գլուխը, տղին էրավ
Թագաւոր: Բերեց էրկու աղջիկը տվեց էրկու տղին, Փերի ղըզին էլ
էդ իրան բերող տղին: Նոր քառասուն օր, քառասուն գիշեր հարսնիք
էրավ: Իրեք տղին էլ պսակեց:

էնոնք հասան իրանց մուրաղին, դուք էլ հասնիք ձեր մուրաղին:
Նրկնքին իրեք խնձոր ընկավ, մեկը՝ ըսողին, մեկը՝ լսողին,
մեկն էլ հանկաջ էնողին:

